

Կրծքի զննումը (շողանկարում) եւ դուք

2 տարին անգամ մը 20 վայրկեանը կրնայ փրկել ձեր կեանքը

Կրծքի քաղցկեղի մասին



NSW-ի մէջ, 7 կիներէն մէկուն մօտ, իր կեանքի ընթացքին, կրծքի քաղցկեղ կը յայտնուի: ¹

Կրծքի քաղցկեղի զարգացման հիմնական վտանգի ազդակներն են կին ըլլալը եւ ծերանալը – կրծքի քաղցկեղի աւելի

քան 75%-ը կը պատահի 50 տարեկանէն վեր կանանց մօտ: ²

50-74 տարեկան կանանց մօտ կրծքի քաղցկեղը կանուխ յայտնաբերելու լաւագոյն միջոցը կուրծքերու շողանկարումն է (մամոկրամ): Մամոկրամը կուրծքերու շողանկարումն է: Մամոկրամները կրնան յայտնաբերել շատ փոքր կրծքի քաղցկեղներ՝ նախքան զանոնք կարենալ տեսնելը կամ զգալը:



Կրծքի քաղցկեղ ունեցող կիներուն 10 ԷՆ 9-ը,

Կրծքի քաղցկեղի հիւանդութեան ընտանեկան պատմութիւն չունին: ³

Որքան շուտ յայտնաբերուի կրծքի քաղցկեղը, այնքան աւելի մեծ է ձեր փրկուելու հաւանականութիւնը:

Կրծքի շողանկարում

BreastScreen NSW ծրագիրը **ձրի** է եւ յատկապէս կ'առաջարկուի 50 ԷՆ 74 տարեկան կիներու համար: Խորհուրդ կը տրուի որ այս տարիքային խմբի կիներ երկու տարին անգամ մը կրծքի շողանկարում ունենան (մամոկրամ):

40 ԷՆ 49 տարեկան կիներ, եւ 75 տարեկանէն վեր կիներ եւս կրնան կրծքի շողանկարում ունենալ: Կը խնդրենք նախ ձեր բժիշկին հետ խորհրդակցիլ՝ քննարկելու ձեզի համար շողանկարումի վտանգները եւ օգուտները:

Կրծքի շողանկարումի համար բժիշկի ուղեգիր անհրաժեշտ չէ:

BreastScreen NSW-ի բոլոր շողանկարողները կիներ են: Անոնք կ'օգտագործեն արդիական սարքաւորումներ որոնք կ'արտադրեն ամենաբարձր որակի մամոկրամներ՝ նուազագոյն ճառագայթումով:

BreastScreen NSW-ով շողանկարումը կիներու համար է որոնք կրծքի քաղցկեղի ախտանշաններ չունին:

Անմիջապէս ձեր բժիշկին դիմեցէք եթէ նկատէք որեւէ ախտանշան, օրինակ՝ մէկ կամ երկու կուրծքերուն վրայ ուռուցք, պտուկէն արտահոսք, կամ մշտական ցաւ, որ նախապէս չէք ունեցած:



Ժամադրուիլ ձեր մամոկրամին համար

- 1 Ժամադրության համար հեռաձայնեցեք 13 20 50 հեռախօսահամարին:
- 2 Ժամադրություն ապահովելու համար եթե թարգմանիչի մը օգնության կարիքը ունիք, հեռաձայնեցեք Բանաւոր եւ Գրաւոր Թարգմանութեան Սպասարկութիւն (TIS) 13 14 50: Երբ ձայնագրուած պատգամ մը լսէք, մի փակէք հեռախօսը: Յստակօրէն ըսէք ձեր խօսած լեզուն եւ սպասեցէք մինչեւ որ լսէք թարգմանիչին ձայնը:
- 3 Երբ ժամադրութիւն կ'առնէք, տեղեկացուցէք BreastScreen NSW -ին եթէ կրօքի խոր ցանումներ (breast implants) ունիք:

Մամոկրամի օրը

- ✔ Վստահ եղէք որ գիտէք BreastScreen NSW -ին հասցէն:
- ✔ Եթէ ձեր վերջին շողանկարումը BreastScreen NSW - ի հետ չէք ունեցած, ձեր նախորդ մամոկրամի շողանկարումները ձեր հետ բերէք:
- ✔ Բերէք ձեր բժիշկին տուեալները որպէսզի ձեր քննութեան արդիւնքները տրամադրուին ձեր բժիշկին:
- ✔ Երկու կտորէ բաղկացած հանդերձանք հագէք: Մամոկրամի ժամանակ մէջքէն վեր հագուստները պետք է հանէք:
- ✘ Ձեր մամոկրամի օրը տալկի փոշի, ապահոտիչ կամ քսուքներ (talcum powder, deodorant or creams) մի օգտագործէք: Ասոնք կրնան ազդել ձեր շողանկարի արդիւնքներուն:

1 NSW-ի քաղցկեղի դէպքերու եւ մահացութեան տարեկան տուեալներու հաւաքածոյ 2016 (աղբիւրը՝ NSW Cancer Registry, Cancer Institute NSW): cancer.nsw.gov.au/understanding-cancer/cancer-in-nsw/data-calculations

2 Աւստրալիական Առողջութեան եւ Բարեկեցութեան Ինսթիթիւտ 2018: BreastScreen Australia վերահսկումի տեղեկագիր 2018: Cancer series no. 112. Cat. no. CAN 116. Canberra: AIHW.

3 Կրօքի Քաղցկեղի Հորմոնային Գործօններու Համագործակցային Խումբ, 2001: Ընտանեկան կրօքի քաղցկեղ. 52 համաճարակաբանական հետազոտութիւններու անհատական տուեալներու համատեղ վերանայում, ներառեալ կրօքի քաղցկեղով 58,209 կին եւ առանց հիւանդութեան 101,986 կին: Lancet 2001; 358: 1389-99

Ձեր մամոկրամի ժամանակ

- Ձեր ժամադրութիւնը կը տեւէ շուրջ 20 վայրկեան:
- Կին շողագրող մը ձեզ պիտի տանի մասնաւոր սենեակ մը ուր կրնաք հանել ձեր վերնաշապիկը եւ կրծկալը:
- Ձեզմէ պիտի խնդրուի կանգնիլ մեքենայի մը առաջ որը երկու շողանկարներ պիտի առնէ իւրաքանչիւր կուրծքէն: Իւրաքանչիւր կուրծք կը դրուի մեքենային դարակին վրայ, եւ կը շողանկարուի: Եթէ զգայուն կուրծքեր ունիք, կամ կռնակի կամ ուսի խնդիրներ, այդ մասին տեղեկացուցէք շողագրողին:
- Մամոկրամը կրնայ անհաճոյ ըլլալ: Հանգիստ ընելը (Relaxing) կրնայ օգնել անհանգստութեան կամ ցաւի նուազեցման: Շողանկարումի գործընթացը միայն մի քանի վայրկեան կը տեւէ:
- Որեւէ ժամանակ կրնաք խնդրել շողագրողէն որ դադարեցնէ մամոկրամը: Կրնաք նաեւ խնդրել որ կարճ ընդմիջումներ ունենաք շողանկարումներու միջեւ:

Ձեր մամոկրամէն ետք

- Առ նուազն երկու մարզուած բժիշկներ անկախաբար կը կարդան ձեր շողանկարներու պատկերները:
- Ձեր մամոկրամի արդիւնքները կը ստանաք նամակով: Սա կը տեւէ շուրջ 2 շաբաթ:
- Ձեր արդիւնքները ձեր արտօնութեամբ, պիտի ուղարկուին ձեր բժիշկին:
- Եթէ ձեր մամոկրամին մէջ կայ բան մը որ յաւելեալ հետազոտութեան կարիքը ունի, ձեզմէ պիտի խնդրուի ներկայանալ Գնահատման Բուժարան (Assessment Clinic) յաւելեալ քննութիւններու համար: 10 կիներէն 9-ը (90%) որոնք կանչուած են յաւելեալ քննութիւններու համար, կրօքի քաղցկեղ չունին: